ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանում «09» օգոստոս 2022թ. ժամը 11:00-ին տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառք կառուցապատման նպատակով՝ 2 լոտով:

Վաճառվում է՝

Լոտ 1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Հ. Թումանյան փողոց, N 77/1 հասցեում գտնվող, բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0072 հա մակերեսով հողամաս, 06-002-0039-0009 ծածկագրով, 360 000 / երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ մեկնարկային գնով՝ ավտոտեխսպասարկման կայան կառուցելու համար:

Լոտ 2. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Պղնձագործների փողոց 6/1 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0084 հա մակերեսով հողամաս, 06-002-0150-0393 ծածկագրով, 210 000 /երկու հարյուր տաս հազար/ դրամ մեկնարկային գնով՝ բնակելի տուն կառուցելու համար:

Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 /տասնհինգ հազար/ դրամ, աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%:

Կառուցապատվող հողամասերի համար աճուրդի հաղթողին տրամադրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Հողամասերի հարևանությամբ գոյություն ունեն ավտոճանապարհներ, ջրատարներ, կոյուղիներ, էլեկտրահաղորդման գծեր և գազատարներ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2022թ. օգոստոսի 04-ը, ժամը 11:00-ն:

Աճուրդի պայմանների մանրամասներին՝ հողամասի ելակետային տվյալներին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին և պայմաններին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ալավերդու համայնքապետարան, (ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1, հեռ.՝ /0253/2-41-00):

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ